ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2018-1-3-Ա

ք. Երևան 07.02.2018թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2018 թվականի փետրվարի 7-ի նիստում քննարկեց 2018 թվականի հունվարի 18-ին արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված՝ Apple Inc. (1 Infinite Loop Cupertino CA 95014) ընկերության «APPLE SMART CONNECTOR» (IR1294728) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 8-րդ մասի 4-րդ կետի համաձայն հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ Օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի համապատասխան տարբերակիչ հատկություն չունեցող տարրի նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից հրաժարվելու մասին ծանուցմանն ի պատասխան հայտատուն ներկայացրել է անընդունելի առարկություն: Ինչպես նաև Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը չունի տարբերակիչ հատկություն և հանդիսանում է նկարագրական բնույթի նիշ: Տվյալ դեպքում «SMART CONNECTOR» ապրանքային նշանը, որն անգլերենից թարգմանաբար նշանակում է «խելացի միակցիչ», չի կարող գրանցվել, քանի որ չունի տարբերակիչ հատկություն և նկարագրական բնույթի նշան է: Բացի այդ, համացանցից ստացված տեղեկությունները նույնպես վկայում են, որ սմարթ միակցիչը համատեղում է առաջատար տեխնոլոգիաները և այն իրար է կապում, միացնում համակարգչային

տեխնիկաները և խելացի ստեղնաշարը
(http://www.alwaysinnovating.com/products/keyboard.htm,
http://appleinsider.com/articles/17/06/27/review-logitech-slim-combo-smart-connector-keyboard-for-apples-105-ipad-pro):

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մասնակիորեն բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումը մասնակիորեն չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը մասնակիորեն գրանցելու հնարավորության մասին պայմանով, որ հայտատուն համաձայն է ներկայացնել հայտարարություն «SMART CONNECTOR» արտահայտության նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից հրաժարվելու մասին:

Բողոքարկողը հայտարարեց, որ հրաժարվում է «SMART CONNECTOR» արտահայտության նկատմամբ բացառիկ իրավունքից:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց, որ ապրանքային նշանը տվյալ դեպքում կարող գրանցվել «SMART CONNECTOR» արտահայտությանը ինքնուրույն պահպանություն չտրամադրելով:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքը մասնակիորեն բավարարել, փորձաքննության որոշումը մասնակիորեն չեղյալ ճանաչել և «APPLE SMART CONNECTOR» (IR1294728) ապրանքային նշանը մասնակիորեն գրանցել՝ «SMART CONNECTOR» արտահայտությանը ինքնուրույն պահպանություն չտրամադրելով:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ